ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **<u>Անունը, ազգանունը՝</u>**

Վահագն Գևորգյան

2. **<u>Զբաղեցրած պաշտոնը՝</u>**

ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեի նախագահ

3. **<u>Անունը, ազգանունը՝</u>**

Վարազդատ Մկրտչյան

4. **<u>Զբաղեցրած պաշտոնը՝</u>**

ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեի նախագահի տեղակալ

5. **<u>Գործուղման վայրը և ժամկետները.</u>**

Ֆրանսիա (Պրովանս-Ալպեր-Կոտ դ'Ազուր տածաշրջան, Փարիզ): 2024 թվականի ապրիլի 7-ից 14-ը:

6. **<u>Հրավիրող կողմը.</u>**

Զարգացման ֆրանսիական գործակալություն

7. **<u>Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).</u>**

Ծանոթություն ջրավազանային և ենթաավազանային մակարդակներում ջրային ռեսուրսների ինստիտուցիոնալ և ինտեգրված կառավարման մոդելների, ոռոգման նոր տեխնոլոգիաների կիրառության, կիրառվող գյուղատնտեսական մոդելների, ինչպես նաև հողերի կառավարման և ֆերմերների աջակցության ֆրանսիական փորձին:

8. **<u>Քննարկված թեմաները.</u>**

Հանդիպումների ընթացքում քննարկված հիմնական թեմաներն էին՝

<u>Ապրիլի 8, 2024 թ.</u>

✓ ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարում, ոռոգման ժամանակակից համակարգերի նախագծում, հիդրավլիկ ինժեներական լուծումներ և ջրերի կառավարման արդյունավետության բարձրացման նորարարական լուծումներ:

<u>Ապրիլի 9, 2024 թ.</u>

✓ ջրերի կառավարման համայնքային մոտեցումներ, կայուն ոռոգման լուծումներ, ենթակառուցվածքների պահպանման և ջրի արդարացի բաշխման մոտեցումներ:

✓ գյուղատնտեսական ջրօգտագործման օպտիմալացում, ջրերի կառավարմամբ նորարարական տեխնոլոգիաներ, ջրապահանջարկի կառավարում և գյուղատնտեսությունում ջրօգտագործման արդյունավետ տեխնոլոգիաների ներդրում:

Ապրիլի 10, 2024 թ.

✓ տեղական ինքնակառավարման մակարդակով ջրերի կառավարում, կայուն գյուղատնտեսություն, ենթակառուցվածկների զարգացում, ջրօգտագործման արդյունավետության խթանում, ջրի պահպանում, գյուղատնտեսության նպատակով ջրի կրկնակի օգագործում, կլիմայի փոփոխության հարմարվողականության ռազմավարություններ:

✓ գյուղատնտեսական հողատարածքների պահպանում, հողատարածքների օգտագործման խթանում, ֆերմերային տնտեսություններում ջրօգտագործման արդյունավետության բարձրացում:

Ապրիլի 11, 2024 թ.

✓ բազմակի նպատակներով օգտագործվող ջրամբարների կառավարում:

✓ այգիների կառավարման ժամանակակից տեխնոլոգիաներ, մշակաբույսերի բազմազանություն, ջրօգտագործման արդյունավետություն, տնտեսական կայունություն:

Ապրիլի 12, 2024 թ.

✓ գյուղատնտեսության համագործակցության մեխանիզմներ, ֆինանսական մոդելներ, հողերի կառավարում, բարեփոխումներ և քաղաքականության հիմնահարցեր:

9. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

✓ Ապրիլի 8, 2024 թ.: «Բի-էր-էլ Ինժեներիա» կազմակերպություն, որը մասնագիտացված է ջրային ռեսուրսների, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի ոլորտներում ինժեներական լուծումների և խորհրդատվության ոլորտներում:

✓ Ապրիլի 9, 2024 թ.: «Սեինթ Ժուլիեն ջրանցքի ջրօգտագործողների ընկերություն», որը զբաղվում է ոռոգման ջրամատակարարմամբ և սեփական ոռոգման համակարգերի կառավարմամբ, շահագործմամբ և պահպանմամբ:

Ապրիլի 9, 2024 թ.: «Սոսիեթե Կանալ դ'Փրովանս» կազմակերպություն, որը Ֆրանսիայում ջրերի կառավարման առանցքային կազմակերպություններից է, մասնավորապես՝ Պրովանս-Ալպեր-Կոտ դ'Ազուր տարածաշրջանում: Կազմակերպությունը օրինակելի մոդել է հանդիսանում ջրային ռեսուրսների համապարփակ և կայուն կառավարման առումով:

✓ Ապրիլի 10, 2024 թ.: Էմբրունի քաղաքապետարան: Հանդիպում քաղաքապետի և Պրովանս-Ալպեր-Կոտ դ'Ազուր տարածաշրջանի փոխնախագահի հետ:

Ապրիլի 10, 2024 թ. «Սաֆեր» կազմակերպություն, որը զբաղվում է գյուղատնտեսական հողօգտագործման կառավարմամբ, աջակցում է կայուն գյուղատնտեսության և ջրերի արդյունավետ կառավարմանը:

✓ Ապրիլի 11, 2024 թ.: «Էլեկտրիսիթե դ'Ֆրանս» կազմակերպություն, որը պատասխանատում է Եվրոպայի ամենամեծ ջրամբարներից մեկի՝ Սեր-Պանտիոն ջրամբարի կառավարման համար: Ջրամբարը բազմակի օգտագործման նշանակություն ունի, ներառյալ հիդրոէլեկտրաէներգիայի արտադրությունը, հեղեղումների կառավարումը և ջրամատակարարումը:

Ապրիլի 11, 2024 թ.: Ալպ տարածաշրջանի հարավում գտնվող ինտենսիվ այգի:

✓ Ապրիլի 12, 2024 թ.: Զարգացման ֆրանսիական գործակալության (ԶՖԳ) գլխամասային գրասենյակ (Փարիզ), որտեղ տեղի են ունեցել հանդիպումներ Ֆրանսիայի գյուղատնտեսության և պարենի նախարարության, ԶՖԳ-ի տարածաշրջանային փոխնախագահի, Ֆրանսիայի գյուղատնտեսության ակադեմիայի, ինչպես նաև «Կրեդիտ Ագրիկոլ» բանկի ներկայացուցիչների հետ:

10. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հայկական կողմը ներկայացրեց առաջարկություններ և դիտարկումներ ջրավազանային և ենթաավազանային մակարդակներում ջրային ռեսուրսների ինստիտուցիոնալ և ինտեգրված կառավարման, ջրային ռեսուրսների մոնիթորինգի համակարգի վերազինման և բարելավման, տվյալների առցանց փոխանցման ու ոռոգման համակարգերի արդյունավետ կառավարման, ջրային պետական կադաստրի արդիականացման, ինչպես նաև գյուղատնտեսության զարգացման ոլորտներում հայ-ֆրանսիական համագործակցության ընդլայնման վերաբերյալ:

Հանդիպումների ընթացքում ձեռք բերվեցին երկուստեք համաձայնություններ՝ շարունակելու և ընդլայնելու առկա համագործակցության շրջանակները՝ ի նպաստ ջրային և գյուղատնտեսության ոլորտների զարգացման:

Նշվեց նաև հայ-ֆրանսիական համագործակցության շրջանակներում իրականացվող «Վեդի ջրամբարի և ոռոգման համակարգի կառուցման» ծրագրի կարևորությունը, որը փորձնական մոդել կլինի ջրի արդյունավետ կառավարման համար (ջրաղբյուրից մինչև ֆերմեր):

11. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Ս.թ. ապրիլի 19-ին ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանը կազմակերպել և ընդունելություն-քննարկում, որի շրջանակներում կքննարկվեն ջրային և գյուղատնտեսության ոլորտների ֆրանսիական փորձի Հայաստանում կիրառման և համագործակցության ընդլայնման հնարավոր ուղղությունները:

12. Ստորագրությունը, ամսաթիվը

Վահագն Գևորգյան _____

Վարազդատ Մկրտչյան _____

18.04.2024թ.